

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.  
ԳԼՈՒԲԱԼ ԾԵՐԱՑՈՒՄ

*Դավիթ Հախվերդյան, Աննա Փախյան\**

*Բանալի բառեր*<sup>1</sup> համաշխարհային տնտեսություն, բնակչության ժողովրդագրական կառուցվածք, գլոբալ ծերացում, ծնելիության նվազում:

«Ծերանում ենք, Պարո՛ւյր Սևակ,  
Ծերանում ենք, սիրելի՛ս...»:

*Պ. Սևակ*

Համաշխարհային տնտեսության զարգացման պայմանները կանխորոշող գործոնների շարքում կարևոր դերակատարում ունեն բնակչության ժողովրդագրական կառուցվածքն ու դինամիկան:

Համաշխարհային տնտեսության ժողովրդագրական կառուցվածքի փոփոխության հիմնական միտումը բնակչության գլոբալ ծերացումն է, որն սկզբում կընդգրկի զարգացած երկրները, իսկ հաջորդ տասնամյակում՝ նաև Չինաստանը<sup>1</sup>: Դա կհանգեցնի աշխատունակ բնակչության հետագա վերաբաշխմանը զարգացող երկրների ուղ-

---

\* Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր:

<sup>1</sup> Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի ափստենտ, տնտեսագիտության թեկնածու:

<sup>1</sup> ՄԱԿ գնահատականներով, աշխատունակ տարիքի (20-64 տարեկան) բնակչության քանակը զարգացած երկրներում 2010 թվականից նվազում է: Աշխատունակ տարիքի բնակչության քանակի կայունացում Չինաստանում սպասվում է 2015 թվականից: Բնակչությանը վերաբերող կանխատեսումները բերված են ՄԱԿ գնահատականներից՝ *World population prospects Revision 2010*.

դությամբ: Բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը<sup>1</sup> կարևորագույն երկարաժամկետ միտումն է և՛ աշխատանքի շուկայի, և՛ բժշկության բնագավառում գիտատեխնիկական զարգացման նկատմամբ պահանջարկի համար [1]:

Պատմությունը ցույց է տալիս, որ բնակչության թվաքանակի աճն արագանում է կենսապայմանների բարելավման ու մահացության նվազման պարագայում: Այնուհետև տեղի է ունենում ծնելիության կրճատում: Բնակչության թվաքանակի աճի արագացումից հետո անխուսափելիորեն սկսում է դանդաղումը, ընդհուպ մինչև նրա բացասական մեծությունը: Ժողովրդագրական գործընթացների դինամիկայում փոփոխությունների ինտենսիվությունը կախված է մահացության կրճատման արագությունից:

20-րդ դարի երկրորդ կեսին աշխարհի ժողովրդագրական պատկերը միանշանակ չէր: Դարի երրորդ քառորդին Եվրոպական երկրներում նկատվում էր ծնելիության աճ, ինչը կարելի էր գնահատել որպես առաջին քառորդում բնակչության կորստի փոխհատուցում: Մասնավորապես, 1951-1973թթ. բնակչության թվի միջին տարեկան աճը Արևմտյան Եվրոպայում հասել էր 0.7%-ի, Արևելյան Եվրոպայում՝ 1%-ի և ԽՍՀՄ-ում՝ գրեթե 1.5%-ի: Եթե համադրենք 20-րդ դարի առաջին կեսի և երրորդ քառորդի ցուցանիշները, ապա կպարզվի, որ 1871-1914թթ. բնակչության թվի աճի տեմպի համեմատ ցուցանիշները նվազել են: Արևելյան և Արևմտյան Եվրոպայի երկրներում բնակչության թվի միջին տարեկան աճը 1915-1973թթ. նվազել է մինչև 0,55%, իսկ ԽՍՀՄ-ում՝ 0,8%: 20-րդ դարի չորրորդ քառորդում այդ միտումը պահպանվել է. տվյալ ցուցանիշը նվազել է համապատասխանաբար մինչև 0,3% և 0,5% [2, p. 256]:

Ժողովրդագրական գործընթացների դինամիկայում աննախադեպ փոփոխություններ էին նկատվում զարգացող երկրներում: Նա-

<sup>1</sup> ՄԱԿ գնահատականներով, 50 տարեկանից բարձր բնակչության թիվը 2010-2030թթ. կաճի 1,5 մլրդ-ով:

խորդ հարյուրամյակի երրորդ քառորդում զարգացած երկրների աջակցության շնորհիվ այստեղ տեղի է ունեցել վարակային հիվանդություններից ու սովից մահացության դեպքերի կտրուկ անկում: Համապատասխանաբար, արագացել է նաև բնակչության թվի աճը: Ասիական երկրներում (բացի Ճապոնիայից) հավելաճի միջին տարեկան տեմպը բարձրացել է մինչև 2,2% (1,3 պրոմիլային կետ), Աֆրիկայում՝ մինչև 2,4% և Լատինական Ամերիկայում՝ 2,7%: Չորրորդ քառորդում արձանագրվեց ծնելիության անկում՝ որպես մահացության կրճատման անխուսափելի հետևանք: Ասիայում դիտարկվող ցուցանիշն իջել է մինչև 1,8%, Լատինական Ամերիկայում՝ մոտ 2%, իսկ Աֆրիկայում այն բարձրացել է մինչև 2,7% [2, p. 256]:

Ընդհանուր առմամբ, աշխարհում 20-րդ դարի երրորդ քառորդում բնակչության թվի հավելաճի միջին տարեկան տեմպը բարձրացել է մինչև 1,9% (դարի առաջին կեսի համեմատ՝ 1 պրոմիլային կետով), իսկ չորրորդ քառորդում նվազել է մինչև 1,6%: Աշխարհի բնակչությունը 2000թ. հասավ 6 մլրդ-ի՝ 2,4 անգամ գերազանցելով 1950թ. ցուցանիշը: Միևնույն ժամանակ, աշխարհի բնակչության թվի աճի միջին տարեկան տեմպը 1980-ական թվականներին կազմել է 1,7%, 1990-ական թվականներին՝ 1,4%, և 21-րդ դարի առաջին 5 տարիների համար՝ 1,3% [3]: Աշխարհի բնակչության թվի աճի դանդաղման ու ծնելիության նվազման միտումները, մահացածության կրճատման հետ մեկտեղ, պայմանավորված են նաև տնտեսական աճի մեջ գիտատեխնիկական առաջընթացի (ԳՏԱ) դերի բարձրացմամբ, տնտեսության ակտիվ բնակչության կազմի մեջ կանանց ինտենսիվ ներգրավվածությամբ և մարդկային կապիտալում կատարվող ծախսերի աճով:

Պտղաբերության գործակիցը ՏՀԶԿ անդամ երկրներում 1970թ. նվազել է մինչև 2,7, իսկ 2004թ.՝ մինչև 1,6: Կազմակերպության անդամ բոլոր երկրներում, բացի Թուրքիայից ու Մեքսիկայից, 2004թ. այս գործակիցը 2,1-ից ցածր է եղել, այսինքն՝ փոխհատուցման գործակ-

ցից էլ ցածր, որի պայմաններում է միայն բնակչության թիվը երկարաժամկետ շրջանում կայունանում: ՏՀԶԿ անդամ բոլոր երկրներում պտղաբերության գործակիցը ծնունակ տարիքի կանանց մոտ նվազել է, իսկ մեծ տարիքի կանանց մոտ՝ աճել [4]:

ՄԱԿ տվյալներով, 2000-ական թվականների կեսերին աշխարհի բնակչության ավելի քան 45%-ն ապրել է այնպիսի երկրներում, որտեղ պտղաբերության գործակիցը ցածր է եղել 2,1-ից (ՏՀԶԿ անդամ երկրներին բաժին է ընկնում աշխարհի բնակչության 18%-ը): Պտղաբերության ցածր գործակցով բնակչության մեծ մասն ապրում է զարգացող երկրներում, որտեղ վարվում է ծնելիության սահմանափակման քաղաքականություն: Այդ երկրների թվին է դասվում Չինաստանը, որտեղ, ըստ պաշտոնական տվյալների, ապրում է աշխարհի բնակչության ավելի քան 20%-ը: Մակայն Չինաստանում ծննդաբերության իրական վերահսկողությունն իրականացվում է միայն քաղաքային բնակչության նկատմամբ:

ՄԱԿ պաշտոնական գնահատականի համաձայն՝ մինչև 2025թ. աշխարհում պտղաբերության միջին գործակիցը կիջնի փոխհատուցման ցուցանիշից ցածր: ՄԱԿ գնահատմամբ, աշխարհի բնակչությունն իր առավելագույն քանակին կհասնի 21-րդ դարի կեսերին՝ դառնալով շուրջ 10 մլրդ [5, p. 13]:

21-րդ դարի կեսերին բնակչության թվաքանակի աճի դադարեցումը հնարավոր է հիշյալ ժամանակահատվածում նրա աճի տեմպերի հավասարաչափ նվազման պարագայում: Օրինակ՝ աճի միջին տարեկան տեմպի՝ յուրաքանչյուր տասնամյակ 0,25 պրոմիլային կետով նվազման պարագայում 2050թ. աշխարհի բնակչության առավելագույն թիվը կլինի 8550 մլն մարդ:

Մինչև 2020թ. բնակչության թվի կանխատեսման մեկ այլ տարբերակով ենթադրվում է նրա աճի միջին տարեկան տեմպի պահպանում, որը 2001-2005թթ. համար կազմել է 1% [6, c. 351.]: Եթե երկա-

րացնենք այդ շրջանը մինչև 2025թ., ապա կարելի է ստանալ մոտ 7740 մլն-ի կարգի մեծություն: Այնուհետև, ելնելով 21-րդ դարի երկրորդ քառորդի 0,5% միջին տարեկան տեմպից՝ 2050թ. համար ստանում ենք աշխարհի բնակչության առավելագույնը 8770 մլն մարդ ցուցանիշը, ինչը 2,6%-ով տարբերվում է նախորդ տարբերակից:

Գնահատականների տարբերությունը պայմանավորված է զարգացած երկրներում բնակչության թվաքանակի աճի անկման հետագծերի մասին տարբեր պատկերացումներով, ինչպես նաև այդ գնահատականների անհստակությամբ: Չի կարելի բացառել նաև ժողովրդագրական քաղաքականության փոփոխության ու վերջինիս՝ բնակչության աճի վրա ունեցած ազդեցությունը [7, c. 67-68]:

*Աղյուսակ 1*

*Բնակչության միջին տարիքը, տարի*

	2010	2015	2020	2025	2030	2050	2100
<b>Աշխարհ</b>	<b>28,5</b>	<b>29,6</b>	<b>31,0</b>	<b>32,2</b>	<b>33,2</b>	<b>36,1</b>	<b>41,2</b>
Չինաստան	34,6	36,0	37,7	39,6	42,1	46,3	46,9
Ճապոնիա	44,9	46,5	48,3	50,2	51,6	53,4	51,8
Հնդկաստան	25,5	26,9	28,4	29,9	31,3	36,7	44,3
Ինդոնեզիա	26,9	28,4	29,7	31,0	32,5	38,4	45,3
Ռուսաստան	38,0	38,5	39,4	40,8	42,4	41,6	42,4
Իտալիա	43,3	45,0	46,7	48,3	49,4	49,9	49,6
Ֆրանսիա	40,0	41,0	41,3	41,8	42,3	43,4	46,7
Գերմանիա	44,3	46,3	47,6	48,4	49,1	51,5	51,1
Մեքսիկա	25,9	27,7	29,5	31,5	33,6	41,9	50,5
Բրազիլիա	29,0	31,2	33,3	35,3	37,1	44,4	49,8
ԱՄՆ	37,1	37,7	38,2	38,9	39,5	40,6	44,4
Հայաստան	31,6	33,4	35,5	37,9	40,4	45,6	47,1


Աղբյուրը՝ UN, DESA, [http://esa.un.org/unpd/wpp/unpp/panel\\_indicators.htm](http://esa.un.org/unpd/wpp/unpp/panel_indicators.htm)

ՄԱԿ գնահատմամբ, մինչև 2030 թվականը երկրագնդի բնակչության միջին տարիքը կաճի 4,7 տարով, իսկ 2030-2100թթ.՝ ևս 8 տարով, այնպես որ՝ 2010թ. համեմատ աշխարհի բնակչությունը 2100թ. կձեռանա 12,7 տարով: Տարածաշրջանային տարիքային կառուցվածքը նույնպես կփոխվի, սակայն բնակչության ծերացման ընդհանուր միտումը կպահպանվի (տե՛ս Աղյուսակ 1):

Ծերացումն, ինքնին, ենթադրում է ավելի բարձր մահացություն, միաժամանակ, ՄԱԿ կանխատեսումներով, կյանքի սպասվող տևողությունը կավելանա (շուրջ 5 տարի): Վերջինս ծնում է մի շարք կարևորագույն խնդիրներ աշխատանքի շուկայի, նոր, բարձրտեխնոլոգիական շուկաների, արտադրության տարածաշրջանային կառուցվածքի, ինչպես նաև գլոբալ խնայողությունների համար:

Գծապատկեր 1

Աշխատունակ բնակչությունն ըստ աշխարհամասերի (մլն մարդ)




Աղբյուրը՝ UN, [http://esa.un.org/unpd/wpp/unpp/panel\\_indicat q rs.htm](http://esa.un.org/unpd/wpp/unpp/panel_indicat q rs.htm)

Բնակչության ծերացմանը զուգընթաց, զգալիորեն կմեծանա որոշակի բժշկական ծառայություններից օգտվող բնակչության քանակը: 50 տարեկանից բարձր տարիքի անձանց թիվը զարգացած երկրներում 490 մլն-ից կաճի մինչև 620 մլն (25%): Աշխարհի մնացած՝ պակաս վճարունակ, բայց ավելի մեծ մասում հավելաճը կկազմի շուրջ 800 մլն մարդ (80%): Նման համամասնությունները ենթադրում են բժշկական ծառայությունների նկատմամբ պահանջարկի զգալի աճ:

Աշխատունակ բնակչության գերակշռող մասը դեռևս բաժին կընկնի զարգացող երկրներին (տե՛ս *Գծապատկեր 1*): Դրա հետ մեկտեղ, աշխատունակ բնակչության թիվն աշխարհում կաճի 22%-ով, հնարավոր է և ավելի՝ հաշվի առնելով զարգացած երկրներում աշխատունակ տարիքի շեմի հնարավոր ավելացման հանգամանքը (տե՛ս

*Գծապատկեր 2*

*20-64 տարեկան անձանց թիվն աշխարհում. քանակը և տեսակարար կշիռը բնակչության մեջ*



Աղբյուրը՝ United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2013). *World Population Prospects: The 2012 Revision, DVD Edition.*

*Գծապատկեր 2*<sup>1</sup>: Անկախ բնակչության թվի աճի տեմպերից, 2015-2100թթ. նկատելի է աշխարհի բնակչության ընդհանուր թվում աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշռի որոշակի անկում, այսինքն՝ ըստ ՄԱԿ կանխատեսումների՝ բնակչության հետագա աճն առավել շոշափելի կլինի ոչ աշխատունակ տարիքի բնակչության շրջանում, ինչն էլ ենթադրում է սոցիալական լարվածություն աշխատունակ տարիքի բնակչության շրջանում: Այսինքն՝ սպասվում է աշխատունակ տարիքի բնակչությունից սոցիալապես կախված մանկահասակների և հատկապես տարեցների թվի աճ, ինչն անպայմանորեն կհանգեցնի աշխատունակ տարիքի բնակչության եկամուտներից գանձվող հարկերի դրույքաչափերի փոփոխման, որն անխուսափելիորեն կծնի սոցիալական լարվածություն:


Թեև աշխատող բնակչության տեսակարար կշիռը մինչև 2030թ. մնում է գրեթե անփոփոխ, 2030-ից աշխատունակ տարիքից բարձր բնակչության կառուցվածքը խիստ փոխվում է. արագանում են բնակչության ծերացման տեմպերը: Դա, մասնավորապես, ենթադրում է աշխատունակ բնակչության նկատմամբ տարեցների կողմից ծանրաբեռնվածության էական աճ: 2100թ. աշխատունակ տարիքի բնակչության՝ տարեցներով ծանրաբեռնվածության գործակիցը ներկայիս ցուցանիշի համեմատ կգրանցի եռապատիկ աճ՝ հատելով 40,5%-ի սահմանագիծը (տե՛ս *Գծապատկեր 3*): Իսկ սա նշանակում է, որ կմեծանա աշխատունակ տարիքի բնակչության հարկային բեռը, կբարձրացվեն հարկերի դրույքաչափերը, քանի որ բնակչության ծերացմամբ մեծանում են աշխատունակ տարիքի բնակչության մեկ շնչի հաշվով կենսաթոշակային ծախսերը:

<sup>1</sup> ՏՀԶԿ երկրներում միջին կենսաթոշակային տարիքը տղամարդկանց համար կազմում է 64.4 տարի, իսկ կանանց համար՝ 63 տարի: Կյանքի սպասվող տևողության աճին զուգահեռ՝ քննարկվում է կենսաթոշակային տարիքը մինչև 75 տարեկան հետագայում ավելացնելու հարցը:



Գծապատկեր 3

Տարեցներով ժողովրդագրական ծանրաբեռնվածության գործակիցն աշխարհում (%)<sup>1</sup>



Աղբյուրը՝ United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2013). World Population Prospects: The 2012 Revision, DVD Edition.


Զարգացած երկրների տարեց բնակչությունը կենսաթոշակային տարիքում, որպես կանոն, չի աշխատում [8]: Այդ պատճառով, տարեցների կողմից ծանրաբեռնվածության աճին զուգընթաց տրամաբանական է սպասել կուտակման նկատմամբ սպառման գերակշռություն: Դժվար թե սոցիալական երաշխիքներն արմատապես կրճատվեն, հետևաբար, ենթադրվում է աշխատունակ բնակչության ոչ արտադրական (ընթացիկ) ծախսերի ծանրաբեռնվածության աճ այն երկրներում, որտեղ սոցիալական խնամքի ներքո գտնվում են ավելի շատ կենսաթոշակառուներ՝ դրանից հանելով աշխատանքի արտա-

<sup>1</sup>Տարեցներով ժողովրդագրական ծանրաբեռնվածության գործակիցը 65 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության թվի հարաբերությունն է աշխատունակ տարիքի բնակչության (մեր դեպքում՝ 20-64 տարեկան) թվին՝ արտահայտված տոկոսներով:

դրողականության հավելաճը: Հետևաբար, բնակչության ծերացումը գլոբալ խնայողությունների պակասուրդի հիմնական գործոններից մեկն է: Այս գործոնը հատկապես ուժեղ ազդեցություն կգործի Ճապոնիայի և Եվրոպայի առանձին երկրների վրա [9, ս. 91-93]:

Գծապատկեր 4

Աշխատունակ տարիքի բնակչությունից համընդհանուր կախվածության գործակիցն ըստ աշխարհամասերի



Աղբյուրը՝ United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2013). World Population Prospects: The 2012 Revision, DVD Edition.

Գծապատկեր 4-ում ներկայացված համընդհանուր կախվածության գործակիցը ենթադրում է անչափահաս և թոշակառու տարիքի բնակչության ընդհանուր թվի հարաբերակցությունն աշխատունակ տարիքի բնակչության թվին (Age 0-19 + Age 65+) / Age 20-64), ցուցանիշն արտացոլված է 100 բնակչի հաշվով կախյալների ընդհանուր թվի տեսքով: Ընդ որում, գործակիցը կարող է ընդունել 100-ից փոքր, 100-ին համարժեք և 100-ից բարձր արժեքներ: Այսպես, աշխատունակ տարի-

քի բնակչությունից համընդհանուր կախվածության գործակիցը կընդունի 100-ին հավասար արժեքներ այն դեպքում, երբ 100 բնակչի հաշվով աշխատունակ տարիքի բնակչության և նրանցից կախյալ վիճակում հայտնված անչափահասների և տարեցների թվերը հավասար են: Իսկ 100-ից փոքր ու մեծ արժեքները ենթադրում են 100 բնակչի հաշվով համապատասխանաբար՝ աշխատունակ տարիքի բնակչության թվի պակաս կամ գերազանցություն նրանցից կախյալ վիճակում հայտնված անչափահասների և տարեցների ընդհանուր թվի համեմատ:

*Գծապատկեր 4*-ի համաձայն՝ 2000-2100թթ. աշխատունակ տարիքի բնակչությունից համընդհանուր կախվածության գործակիցն աշխարհում և առանձին աշխարհամասերում աճի միտում ունի՝ բացառությամբ Աֆրիկայի, որտեղ կանխատեսում է վերոնշյալ գործակցի նվազման միտում:

Ակնհայտ է, որ ծնելիության անկումն ու բնակչության ծերացումը նպաստում են սոցիալ-տնտեսական ոլորտում խնդիրների սրմանը: Առաջին հերթին՝ աշխատուժի կազմում կրճատվում է ամենաերիտասարդ տարրի բաժինը, որն առավել կրթված ու ընկալունակ է նորարարությունների նկատմամբ: Մասնավորապես, *The Economist* ամսագրի հետազոտական կենտրոնի կողմից տրված գնահատականի համաձայն՝ 21-րդ դարի 2-րդ տասնամյակի կեսերին Ճապոնիայում 20-30 տարեկան աշխատողների բաժինը կնվազի 1/3-ով: Երկրորդ հերթին՝ աշխատողների ու կենսաթոշակառուների թվաքանակի հարաբերությունը Ճապոնիայում և Իտալիայում մինչ 2030թ. ներկայիս 4:1-ից կնվազի մինչև 2:1, իսկ մինչև 2050թ.՝ մինչև 3:2: Նման խնդիրների հետ արդեն բախվում են Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի (Գերմանիայից մինչև Ռուսաստան), միջերկրածովյան ու Արևելյան Ասիայի երկրները [6, c. 351]:

*The Economist* ամսագրի փորձագետները բնակչության ծերացման հետ կապված խնդիրների լուծման ավելի կառուցողական մո-

տեցում են համարում մեծ տարիքի մարդկանց համար աշխատանքը շարունակելու պայմանների ստեղծումը: Այն առավել ևս արդարացված է, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ տնտեսության ոլորտային կառուցվածքի և աշխատանքի բնույթի փոփոխման արդյունքում ինչպես կանանց, այնպես էլ մեծահասակ անձանց աշխատանքի օգտագործման հնարավորություններն օբյեկտիվորեն ընդլայնվում են: Կյանքի որակի բարելավման և առողջապահության բնագավառում առաջընթացը թույլ է տալիս ընդլայնել աշխատունակ տարիքի սահմանները:

Առաջարկվող միջոցների թվին են դասվում աշխատանքային գործունեության պարտադիր ընդհատման տարիքային շեմի վերացումը, կենսաթոշակային տարիքի շեմի բարձրացումը և այս հարաբերություններում կանանց ու տղամարդկանց միջև հավասարության հաստատումը: Նոր պայմաններում աշխատանքի ընդունման ու աշխատավարձի դրույքաչափի սահմանման ժամանակ հիմնական չափանիշներ պետք է դառնան մտավոր կարողությունները, արհեստավարժությունը և հետաքրքրվածությունն աշխատանքում: Աշխատանքային ռեսուրսների որակական բնութագրերի պահպանման համար պահանջվում են կրթության, առողջապահության և մանկական հաստատությունների վրա մասնավոր ու պետական մակարդակով նշանակալի ծախսեր և սոցիալական օգնության այլ ձևեր:

2003թ. ՏՀԶԿ անդամ երկրներում կրթությանը հատկացված ծախսերը կազմել են այս երկրների ՀՆԱ 6,3%-ը, իսկ ՀՆԱ 7%-ից ավելի են ծախսել ԱՄՆ-ը, Կորեան, Դանիան ու Իսլանդիան: Միննույն ժամանակ, 29 երկրներից 7-ում այն ՀՆԱ 5%-ից պակաս է կազմել [10]:

Կրթության մակարդակը (25 տարեկանից բարձր բնակչության), որը հաշվարկվում է բոլոր մակարդակի դպրոցներում անցկացված տարիների միջին քանակով, XX դարի երկրորդ կեսին ողջ աշխարհում անշեղորեն աճել է: Հարվարդի համալսարանի միջազգային

զարգացման կենտրոնի տվյալներով, 1960-2000թթ. համար այն մոտ 1,5 անգամ աճել է՝ 4,61-ից դառնալով 6,72: Զարգացող երկրներում նշյալ ցուցանիշն աճել է շուրջ 2,7 անգամ՝ 1,79-ից հասնելով 4,89-ի, իսկ զարգացած երկրներում՝ 1,4 անգամ (6,97-ից դարձել է 9,8): Անցումային տնտեսությամբ երկրներում կրթության մակարդակը 7,17-ից աճել է մինչև 9,95, բայցևայնպես, 2000թ. այն ավելի ցածր է եղել, քան 1990թ.՝ 10,02 [11]:

1970 թվականից հետո կրթության մակարդակի բարձրացման տեմպերը բոլոր խմբերի երկրներում դանդաղել են, ինչը թույլ է տալիս ակնկալել, որ XXI դարի կեսերին նշյալ ցուցանիշը զարգացող ու զարգացած երկրներում էականորեն կմոտենա. 1-ին խմբի երկրներում մինչև 2025թ. 11 տարի և 2050թ.՝ 12 տարի, իսկ 2-րդ խմբի երկրներում՝ համապատասխանաբար 7 և 9 տարի:

Կրթության որակի բարձրացմանը նպաստում է նաև հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերի աճը: Անցումային երկրներում արդեն մի քանի տասնամյակ է, ինչ այս ցուցանիշը գտնվում է ՀՆԱ 2-3% միջակայքում:

2004թ. ՏՀԶԿ անդամ երկրներում միջին ցուցանիշը կազմել է 2,3%: Ճապոնիայում, Շվեյցարիայում և Ֆինլանդիայում այն գերազանցել է ՀՆԱ 3%-ը: Բարձրագույն կրթության որակի բարձրացման և ԳՏԱ-ի համար հատկապես կարևոր է հիմնարար հետազոտությունների վրա հիմնված առաջանցիկ աճը: ԱՄՆ-ում դրանց վրա կատարվող ծախսերը գերազանցել են ՀՆԱ 0,4%-ը: Հետազոտությունների և մշակումների վրա ծախսերի կեսից ավելին բաժին է ընկնում նոր տեխնիկայի նմուշների մշակմանը: XXI դարի սկիզբը նշանավորվեց զարգացող երկրներում հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերի առաջանցիկ աճով: Այսպես, Չինաստանում 2005թ. այդ ծախսերը հասել են ՀՆԱ 1,3%-ին, այն դեպքում, երբ 2000թ. դրանք կազմում էին ընդամենը 0,9% [12]:

ՏՀԶԿ անդամ երկրներում սոցիալական կարիքներին հասկացված ծախսերը (առանց կրթության ոլորտի) 1980-2003թթ. ՀՆԱ 16%-ից աճել են 21%-ի: Նրանք ներառում են կենսաթոշակները (ՀՆԱ 8%), առողջապահությունը (6%), սոցիալական օգնությունն աշխատունակ տարիքի բնակչությանը (5%), ինչպես նաև երեխաներ ունեցող ընտանիքներին (2%): Սկանդինավյան երկրներում վերջին ցուցանիշը հասել է 3%-ի [7, c. 68-70]: Ընդհանուր առմամբ, ՏՀԶԿ երկրներում բնակչության սոցիալական աջակցության մասշտաբներն էականորեն տարբերվում են. Մեքսիկայում և Կորեայում նրա բաժինը ՀՆԱ-ում տատանվում է 5-6%-ի շրջակայքում, իսկ Շվեյցարիայում՝ մինչև 31% [13]:

Այսպիսով, համաշխարհային տնտեսության զարգացման վրա բնակչության ծերացման գործոնի ազդեցությունը ենթադրում է.

- ինայոդության գլոբալ նորմի իմաստով՝ աշխատանքի արտադրողականության առաջանցիկ աճի բացակայության պայմաններում տարեցների կողմից ժողովրդագրական ծանրաբեռնվածության գործակցի ավելացում,
- ինայոդությունների գլոբալ կուտակման դանդաղեցում կամ դադարում՝ տարեցների կողմից կուտակված ինայոդությունների սպառման աճին զուգընթաց,
- պետության իմաստով՝ ամենամյա կենսաթոշակային ծախսերի ավելացում մինչև ՀՆԱ 1,5%-ը 2030թ. դրությամբ,
- առանձին շուկաների և տեխնոլոգիաների իմաստով՝ 2030թ. դրությամբ բժշկական ծառայություններից և ինամքի ծառայություններից օգտվողների աճ առնվազն 30%-ով կամ 200 մլն-ով՝ միայն զարգացած երկրներում,
- կենսաթոշակային համակարգի պակասուրդի խնդրի բարդացում ԱՄՆ-ում և ԵՄ առանձին երկրներում [14, 15],
- կենսաթոշակային կուտակումների փոքրացմանը զուգընթաց ինայոդության նորմի նվազում, որն ԱՄՆ-ում առանց այդ էլ առանձնապես բարձր չէ [9, c. 100]:

Անդրադառնալով Հայաստանին՝ նշենք, որ ՄԱԿ Տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի կանխատեսումներով՝ Հայաստանի բնակչությունը 2050թ. 2013-ի համեմատ կկրճատվի 6,5%-ով կամ 195 հազար մարդով՝ 2.977,0 հազ. մարդուց հասնելով 2.782,0 հազ. մարդու: Հայաստանում բնակչության թվի անկում է կանխատեսվում նաև հաջորդող ժամանակահատվածի համար. համաձայն ՄԱԿ գնահատականների՝ 2100թ. երկրի բնակչության թիվը կկրճատվի մինչև 2.335,0 հազ. մարդ [16, p. 85]: Նման միտումը պայմանավորված է արտագաղթի աճող տեմպերով և պտղաբերության գործակցի ոչ բավարար՝ նույնիսկ փոխհատուցման գործակցից ցածր մակարդակով. եթե 1975-7980-ական թթ. պտղաբերության գործակցի միջին ցուցանիշը Հայաստանում կազմել է 2,50, ապա 2000-2025թթ. այդ ցուցանիշի փաստացի և կանխատեսվող մակարդակները տատանվում են 1,72-1,74-ի սահմաններում, հաջորդող ժամանակահատվածի համար ՀՀ-ում կանխատեսվում է պտղաբերության գործակցի որոշակի աճ (2045-2050թթ.՝ 1,82, իսկ 2095-2100թթ.՝ 2,00), որը, սակայն, բավարար չի լինի բնակչության թվի կրճատման դինամիկան փոփոխելու համար: Այս առիթով բազմիցս մտահոգություն է հայտնել նաև ժողովրդագրագետ Ռ.Եզանյանը, որի խոսքերով՝ «Այսօր վերարտադրական տարիքում գտնվող մեկ գույզի վերարտադրման ցուցանիշը կազմում է 1,4, մինչդեռ 20-րդ դարի 70-80-ական թվականներին յուրաքանչյուր գույզ միջինն ունենում էր երեք երեխա՝ ապահովելով վերարտադրության 2,6 գործակցից: Հետևաբար, տեղի ունի նեղացող բնական վերարտադրություն, քանի որ այսօրվա մայրական սերունդն իրեն կիսով չափ է վերարտադրում» [17]:

Այսպիսով, եթե կոնկրետացնենք Հայաստանի ժողովրդագրական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, ապա պետք է չեզոքացվեն բնակչության թվաքանակի կրճատման հիմնական պատճառները՝ արտագաղթը, ծնելիության նվազումը և մահացության աճը [18]:

Բնակչության ծերացումն ու թվի կրճատումը հղի են ոչ միայն ժողովրդագրական, այլև խոր տնտեսական հետևանքներով: Աշխատունակ տարիքի բնակչության փոքր տեսակարար կշիռը մոտ ապագայում կհանգեցնի պետական բյուջեի ճեղքվածքի խորացմանը՝ պայմանավորված աշխատավարձից եկամտահարկի տեսքով պետբյուջեի հարկային մուտքերի նվազմամբ և միաժամանակ, կենսաթոշակային ծախսերի ավելացմամբ:

*Աղյուսակ 2*

*Աշխարհի և ՀՀ բնակչության բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի*

Տարիքային խմբեր	2013		2050		2100	
	Աշխարհ	ՀՀ	Աշխարհ	ՀՀ	Աշխարհ	ՀՀ
0-14	26,2	20,2	21,3	15,1	17,9	15,0
15-59	62,0	65,4	57,5	53,4	54,6	50,3
60+	11,7	14,4	21,2	31,5	27,5	34,7
80+	1,7	2,6	4,1	6,7	7,6	12,4

*Աղբյուրը՝ United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2013). World Population Prospects: The 2012 Revision, Highlights and Advance Tables. Working Paper No. ESA/P/WP. 228., p. 65.*

Աղյուսակ 2-ում բերված տվյալներից երևում է, որ ինչպես աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում նկատելի է բնակչության աստիճանական ծերացման միտումը. կանխատեսվող ժամանակահատվածում սպասվում են անչափահաս երեխաների և չափահաս տարիքի աշխատունակ բնակչության տեսակարար կշռի անկում և փոխարենը՝ 60 տարեկանից բարձր տարիքի բնակչության մասնաբաժնի աճ: Ընդ որում, բնակչության ծերացման տեմպերը ՀՀ-ում աշխարհի միջինացված ցուցանիշի համեմատ առավել խորն են արտահայտված: Սա նաև հետևանքն է այն բանի, որ ՀՀ-ում բնակչության կյանքի սպասվող միջին տևողությունը ևս գերազանցում է աշխարհի միջինացված ցուցանիշը:

*Սեպտեմբեր, 2014թ.*



## Աղբյուրներ և գրականություն

1. *А.Апокин*, *Мировая экономика в долгосрочной перспективе: субъектный анализ*, [http://www.forecast.ru/\\_ARCHIVE/Analitics/VoprEconom/Apokin2012.pdf](http://www.forecast.ru/_ARCHIVE/Analitics/VoprEconom/Apokin2012.pdf)
2. *Maddison A.*, *The World Economy Historical Statistics*. Paris: OECD, 2003, p. 256.
3. *Population Growth Rates//OECD Factbook 2007*. Paris. OECD, 2007 ([www.oecd.org/factbook](http://www.oecd.org/factbook)).
4. *Evolution of the Population // OECD Factbook 2007*.
5. *How to Deal with a Falling Population // The Economist*. 2007. July 28, p. 13.
6. *Мировая экономика: прогноз до 2020 года / под ред. акад. А.А. Дынкина / ИМЭМО РАН, М., Магистр, 2007*.
7. *В. Клинов*, *Мировая экономика: прогноз до 2050г., Вопросы экономики*, № 5, 2008, с. 62-79.
8. *Live Longer, Work Longer: A synthesis report*, OECD, 2006.
9. *А.Апокин*, *Мировая экономика в долгосрочной перспективе: субъектный анализ*, «Вопросы экономики», М, 2012, №6, с. 89-109.
10. *Public and Private Education Expenditure // OECD Factbook 2007*.
11. *Barro R.J., Lee J.W.*, *International Data on Educational Attainment: Updates and Implications // CID Working Paper 42*. 2000.
12. *Expenditure on R&D // OECD Factbook 2007*.
13. *Social Expenditure // OECD Factbook 2007*.
14. *Yermo J. and C. Severinson (2010)*, "The Impact of the Financial Crisis on Defined Benefit Plans and the Need for Counter-Cyclical Funding Regulations", *OECD Working Papers on Finance, Insurance and Private Pensions*, No. 3, OECD Publishing.
15. *The 2009 Ageing Report: Economic and budgetary projections for the EU-27 Member States (2008-2060)*, 8 С, 2009.
16. *United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2011)*. *World Population Prospects: The 2010 Revision, Volume I: Comprehensive Tables*. ST/ESA/SER.A/313. p. 85.
17. *Ռ. Եզանյան*, «Այսօրվա մայրական սերունդն իրեն կհստվ չափ է վերարտադրում», *մարտ 3*, 2010, <http://www.7or.am/am/news/view/14976/>
18. *Ն. Գալստյան*, *Հայաստանի ժողովրդագրական անվտանգության մարտահրավերները*, <http://archive.ankakh.com/2010/05/33946/>:

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ. ԳԼՈՒԿԱԼ ԾԵՐԱՑՈՒՄ**

*Դավիթ Հախվերդյան, Աննա Փախյան*

Ամփոփագիր

Համաշխարհային տնտեսության զարգացման պայմանները կանխորոշող գործոնների շարքում իրենց կարևորագույն դերակատարումն ունեն բնակչության ժողովրդագրական կառուցվածքն ու դինամիկան: Բնակչության ժողովրդագրական կառուցվածքի փոփոխության հիմնական միտումը գլոբալ ծերացումն է: Ընդ որում, բնակչության ծերացման տեմպերը ՀՀ-ում աշխարհի միջինացված ցուցանիշի համեմատ առավել խորն են արտահայտված: Սա նաև հետևանքն է այն բանի, որ ՀՀ-ում բնակչության կյանքի սպասվող միջին տևողությունը ևս գերազանցում է աշխարհի միջինացված ցուցանիշը:

**ДЕМОГРАФИЧЕСКИЕ ОСНОВЫ МИРОВОЙ ЭКОНОМИКИ:  
ГЛОБАЛЬНОЕ СТАРЕНИЕ**

*Давид Ахвердян, Анна Пахлян*

Резюме

Наряду с основными тенденциями, определяющими условия развития мировой экономики, свою важную роль имеет динамика и демографическая структура населения. Основной тенденцией изменения демографической структуры населения является его глобальное старение. При этом, по сравнению со средними показателями мировой экономики, темпы старения населения Армении выражены более явно, что обусловлено тем обстоятельством, что ожидаемая средняя продолжительность жизни в Армении тоже превосходит соответствующий мировой показатель.

## DEMOGRAPHIC BASES OF THE WORLD ECONOMY: GLOBAL AGING

*Davit Hakhverdyan, Anna Pakhlyan*

### Resume

Along with the major trends that define the conditions of the world economy, the dynamics and demographic structure of population play an important role. The global aging of the population is the main trend that changes in the demographic structure. At the same time, compared to the average performance of the world economy, the pace of population aging in Armenia expressed more deeply, and this is due to the fact that the average life expectancy in Armenia also exceeds the corresponding figure for world.